



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

1 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Բերմա» ՓԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Բերմա» ՓԲ ընկերությունը 12.10.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «Ժե» ենթակետը, այնքանով, որքանով «կրեդիտորական պարտք» հասկացության պրակտիկայում տրված մեկնաբանությունը ներառում է նաև հարկային հաշվառման տեսանկյունից ծախս չհամարվող /որպես ծախս չհաշվառվող/ վճարման ենթակա շահաբաժնի գումարը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող եւ անվավեր»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հանձնարարագրով «Բերմա» ՓԲԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում ընդունվել է ստուգման ակտ, որի համաձայն բացահայտվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետի եւ ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 19-ի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի «բ» ենթակետի 4-րդ, 21-րդ եւ 22-րդ կետերի պահանջների խախտումներ: Ակտը բողոքարկվել է ՀՀ վարչական դատարան, որն ամբողջությամբ հայցը մերժել է: Ընկերությունը ներկայացրել է վերաքննիչ բողոք: 21.04.2015թ. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը բողոքը բավարարել է մասնակի եւ գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ որոշմամբ նշված ծավալով նոր քննության: Գործի նոր քննության արդյունքում Վարչական դատարանը դիմումատուի հայցը բավարարել է մասնակի: ՀՀ վարչական դատարանի վճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից: ՀՀ վճռաբեկ դատարանը 03.05.2017թ. որոշմամբ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժել է:

3. Դիմողի՝ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները հանգում են հետեւյալին: Դիմողը նշում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետում օգտագործվող «կրեդիտորական պարտք» եզրույթը պրակտիկայում կիրառվում է այդ հոդվածի հիման վրա ընդունված՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ «կրեդիտորական պարտք» եզրույթին տրված իմաստով, որը ներառում է նաեւ վճարման ենթակա շահաբաժնի գումարը:

Ըստ դիմողի՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով սահմանված՝ սեփականության իրավունքի միջամտության թույլատրելի միջոցներին այնքանով, որքանով նշված հոդվածի կիրառումը հանգեցնում է սեփականության իրավունքի՝ օրենքով չնախատեսված միջամտության, քանի որ օրենքում օգտագործվող «կրեդիտորական պարտք» եզրույթը կիրառվում է ավելի ցածր իրավաբանական ուժ

ունեցող ենթաօրենսդրական ակտով դրան տրված իմաստով, որն ինքնին հակասում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածին, քանի որ վերջինիս համաձայն վճարման ենթակա շահաբաժնի գումարը դիտարկվում է որպես ծախս չհամարվող տարր:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածների վերլուծությունից հետևում է, որ անձինք ազատ են տիրապետելու սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը, այդ թվում՝ դրամական միջոցները: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է հարկ վճարելու պարտականությունը: Սա նշանակում է, որ հարկի գումարի նկատմամբ անձանց սեփականության իրավունքն իրավաչափորեն սահմանափակված է, դա վերջիններիս պարտականությունն է պետության հանդեպ, ինչն անառարկելիորեն բխում է հանրային շահից: Հենց վերոգրյալի հաշվառմամբ սահմանվել է բացառապես օրենքի հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման եւ բացառապես օրենքի հիման վրա հարկերի սահմանման սկզբունքները:

Դիմողը գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին այնքանով, որքանով նշված հոդվածի կիրառումը հանգեցնում է սեփականության իրավունքի՝ օրենքով չնախատեսված միջամտության, քանի որ օրենքում օգտագործվող «կրեդիտորական պարտք» եզրույթը կիրառվում է ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ենթաօրենսդրական ակտով՝ դրան տրված իմաստով, անձը չի կարող իր վարքագիծը պայմանավորել օրենքին համապատասխան, քանի որ մի դեպքում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի ուժով շահաբաժնի մասով չի առաջանում կրեդիտորական պարտք, սակայն մեկ այլ դեպքում՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետը պրակտիկայում կիրառվում է ճիշտ հակառակ իմաստով: Բացի դրանից, նշված դրույթը ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին հակասում է նաև այնքանով, որքանով նշված միջամտությունը չի բխում հանրային շահից, հարկ վճարելու սահմանադրական պարտականության ապահովման սկզբունքից, քանի որ օրենքի ուժով պետությունը, ի դեմս հարկային

մարմնի, հետաքրքրված չէ հարկային հաշվառման ոչ ենթակա, ծախս չհամարվող տարրերով, դրանք չեն հաշվառվում որպես կրեդիտորական պարտքեր, հետևաբար՝ չեն կարող դուրս գրվել որպես անհուսալի կրեդիտորական պարտքեր:

4. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողը, վիճարկելով խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականությունը, իր փաստարկներում շեշտադրում է այն, որ խնդրո առարկա դրույթի կիրառումը հանգեցնում է սեփականության իրավունքի՝ օրենքով չնախատեսված միջամտության, քանի որ օրենքում օգտագործվող «կրեդիտորական պարտք» եզրույթը կիրառվում է ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ, դրան հաղորդած իմաստով՝ այն պարագայում, երբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի ուժով շահաբաժնի գումարը դիտվում է որպես ծախս չհամարվող տարր: Այս համատեքստում դիմողը, թվով երկրորդ վերաքննիչ բողոքում իր հիմնավորումները ներկայացնելիս մատնանշելով ՀՀ կառավարության նշյալ որոշումը, շեշտադրել է այն հանգամանքը, որ «... սույն գործով պարզման ենթակա հանգամանք է, թե արդյոք տեղի է ունեցել պարտատիրոջ եւ պարտապանի փոխադարձ համաձայնությամբ պարտավորության երկարաձգում, թե՛ ոչ... Եթե պարտավորության երկարաձգում տեղի է ունեցել, ապա սույն գործով թիվ 1001329 ստուգման ակտի 1-ին կետում առաջադրված շահութահարկի պարտավորություններն անհիմն են...»: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ «... ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների թվին չի դասել շահաբաժինների գծով անխուսափելի դարձած կրեդիտորական պարտքերը..., շահաբաժինները բաշխել է 2009 թվականի ապրիլ ամսին, որի մարման ժամկետ չի սահմանել եւ արդյունքում թվով 6 մասնակիցների

մասով նշված գումարի չափով այն դարձել է անհուսալի եւ ենթակա էր դուրս գրման...»: Այսինքն՝ դիմողի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիմնավորումներն առ այն, որ տեղի է ունեցել պարտատիրոջ եւ պարտապանի փոխադարձ համաձայնությամբ պարտավորության երկարաձգում, ինչի արդյունքում էլ չվճարված շահաբաժնի մասով շահութահարկի պարտավորություններ չէին առաջանա, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն ակնհայտ անհիմն է համարել՝ մերժելով դիմողի վերաքննիչ բողոքը: Արդյունքում՝ դիմողի իրավունքների խախտումը պայմանավորված է եղել ոչ թե վիճարկվող դրույթին Կառավարության որոշմամբ տրված բովանդակությամբ, այլ նրանով, որ գործի դատաքննության արդյունքում չի ապացուցվել չվճարված շահաբաժնի մասով առաջացած պարտավորության երկարաձգման փաստը:

Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմողի համար առաջացած անցանկալի հետեւանքները պայմանավորված են նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերով, եւ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել որպես խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկում: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Բացի դրանից, դիմումի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «Ժե» ենթակետի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության ենթադրյալ իրավական հակասահմանադրականությունը հիմնավորվում է նրանով, որ դատարաններն օրենքի վիճարկվող նորմը մեկնաբանելիս կիրառել են ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշումը: Ընդ որում, դատարաններն օրենքի վիճարկվող նորմը կիրառելիս հիմք են ընդունել ոչ թե օրենսդրության ընդհանուր տրամաբանությունը, այլ կոնկրետ իրավական ակտը՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշումը, որով

ըստ էության բացահայտված է օրենքի վիճարկվող նորմի բովանդակությունը: Մինչդեռ ՀՀ կառավարության որոշման վիճարկման հնարավորությունն անհատական դիմումի շրջանակներում Սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Բերմա» ՓԲԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 նոյեմբերի 2017 թվականի 313/ՄԿ
ԵՊՀ/2-25